Պատասխան Լոռու մարզպետի (չ)պատասխանին

Մենք շարունակում ենք սպասել ոչ թե հարցազրույցի, այլ պատասխանի

Մի մարդ շարունակ գլուխ է գովում, պարծենում, որ ինքը «այս է, այն է, բոլորն իրեն ճանաչում են, անգամ շուն չկա, որ իրեն չճանաչի, իրենց գյուղում ինքը մեծ հեղինակություն է…»: Եվ մի օր խոսակիցներից մեկը չի համբերում՝ «Այ ընկեր, կարծում ես ձեր գյուղից մարդ չկա՞»: Իմաստը պարզ է. քիչ խոսա, որովհետև շատ խոսելուց շատ բան կպարզվի:

Լոռու մարզպետի պաշտոնական կայքէջից տեղեկացանք, որ «Լոռին զարգանում է ժամ առ ժամ»: Լուրը, անկեղծ ասած, այնքան հուսադրող էր, որ «Հրապարակ» օրաթերթը ոչ միայն հրապարակեց այդ մասին հոդված, այլև որոշեց ավելի հեռուն գնալ՝ դիմել մարզպետին ուղիղ հարցերով: Ոչ թե հաճոյանալու, ոչ թե գովազդ ապահովելու, այլ պարզ մի պատճառով. **եթե Լոռին իսկապես զարգանում է ժամ առ ժամ, հանրությունն իրավունք ունի իմանալ՝ ինչպե՞ս, ինչի՞ հաշվին և ինչ ուղղություններով է զարգանում:**

Մենք սիրով հարթակ առաջարկեցինք: Թերթ, որն ունի հազարավոր ընթերցողներ, առաջարկեց մարզպետին խոսել հենց այդ ընթերցողների հետ: Ուղարկեցինք հարցաշար, որը ոչ թե հարցազրույց խնդրելու քմահաճույք էր, այլ **պաշտոնյայի նկատմամբ օրենքով սահմանված պահանջ**՝ տեղեկացնել հանրությանը իր գործունեության մասին:

Այստեղ կարևոր է մի շեշտադրում. մենք **չենք պահանջում անձնական լավություն**, ոչ էլ աղաչում ենք հարցազրույցի համար: Մենք ուզում ենք, որ պետական պաշտոնյան **հարգի օրենքը:**

Մեր հարցերը պարզ էին ու բովանդակային.
-Լոռու մարզում ի՞նչ կոնկրետ արդյունքներ են արձանագրվել կարճ ժամանակում, ի՞նչ աշխատատեղեր են ստեղծվել, ի՞նչ է արվում արտադրական պոտենցիալի հետ, մարզպետարան–համայնք հարաբերություններում ի՞նչ խնդիրներ կան, ինչո՞ւ Լոռու մարզպետարանն ութ տարի է՝ թերթ չի ստանում, մամուլի հետ փաստացի չի աշխատում:

Այս հարցերը ոչ թե «**անհարմար**» են, այլ **բնական:** Սրանք այն հարցերն են, որոնք ցանկացած լոռեցի կարող էր տալ, եթե ունենար մարզպետի էլեկտրոնային հասցեն ու համբերություն:

Պատասխանը, սակայն, եղավ խուսափողական ու դատարկ, «կտրուկ-բարեկամական».
«Աշխատանքային ծանրաբեռնվածության և ժամանակի սղության պատճառով առաջիկայում հարցազրույց չի նախատեսվում»:

Այստեղ է, որ սկիզբ են առնում նոր հարցեր: Ոչ թե այն պատճառով, որ մարզպետը ժամանակ չունի դեմ առ դեմ հանդիպելու լրագրողի հետ: Ժամանակ չունեն բոլորը:

Բայց եթե **օրենքը չի պահանջում հարցազրույց, գոնե պահանջում է բավարար պատասխան:**

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը հստակ սահմանում է, որ պետական մարմիններն ու պաշտոնյաները պարտավոր են լրագրողի հարցմանը պատասխանել սահմանված ժամկետներում՝ անկախ նրանից՝ դա արվում է բանավոր, գրավոր, թե էլեկտրոնային եղանակով: Պաշտոնյան կարող էր առանց մեկ րոպե հանդիպման, առանց տեսախցիկի, պարզապես նստել ու էլեկտրոնային փոստով պատասխանել հարցերին: Դա կլիներ ոչ թե բարի կամք, այլ օրենքի կատարում:

Փոխարենը ստացանք ձևակերպում, որը փորձ է անում ներկայացնել իրավիճակը այնպես, կարծես թերթը ինչ-որ բան է խնդրել, իսկ ինքը՝ մերժել է: Մինչդեռ իրականում թերթը հիշեցրել է և օգտվել է իր իրավունքից և գործել միմիայն լիազորությունների շրջանակում: Իսկ պաշտոնյան՝ խուսափել է իր պարտականությունից:

Սա արդեն մամուլի հետ հարաբերությունների խնդիր չէ: Սա վերաբերմունքի խնդիր է՝ հանրության նկատմամբ: Որովհետև մամուլը միջնորդ է, ոչ հասցեատեր: Հարցերը տրվել էին ոչ թե գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանի կամ լրագրող Գագիկ Անտոնյանի քմահաճույքով, այլ **Լոռու բնակչությանը տեղեկություններ հաղորդելու անհրաժեշտությունից** : Ինչո՞ւ չէ, նաև՝ ողջ հանրապետության բնակչության: Ինչո՞ւ միայն լոռեցիք իմանան, որ իրենք զարգանում են: Գուցե՞ փորձի փոխանակության գան, լավագույն օրինակից դաս առնեն:

Չէ՞ որ «ժամառժամ զարգացման» **Զարգացումը** միայն այցելություններով, կենացներով ու կայքէջում տեղադրված հաղորդագրություններով չի չափվում: Զարգացումը չափվում է նաև նրանով, թե որքան բաց ես հարցերին, որքան հաշվետու ես, որքան պատրաստ ես բացատրել քո ասած մեծապատիվ խոսքերը:

Եթե Լոռին իսկապես զարգանում է ժամ առ ժամ, ապա այդ զարգացումը պետք է կարողանա դիմանալ մի քանի պարզ ու կոնկրետ հարցի: Իսկ եթե հարցերից խուսափում են, բնական հարց է ծագում՝ գուցե խնդիրը ոչ թե ժամանակի սղությունն է, այլ բովանդակության պակա՞սը:

«Հրապարակը» չի պատրաստվում «ցեխը կոխել» որևէ մեկին անձնական վիրավորանքներով: Բայց նույնքան էլ չի պատրաստվում լռել, երբ օրենքը շրջանցվում է, իսկ պարծենալը՝ գերազանցում գործին: Քիչ խոսելը երբեմն իսկապես ավելի ապահով է: Հատկապես այն դեպքում, երբ քո գյուղից մարդիկ կան, ովքեր շատ լավ հիշում են՝ ով ով է, ինչի համար է պատասխանատու:

Մենք շարունակում ենք սպասել ոչ թե հարցազրույցի, այլ պատասխանի: Որովհետև դա ոչ թե մեր խնդրանքն է, այլ հանրության իրավունքը:

ԳԱԳԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ

ԼՈՌԻ